

ԱՆՕԹԵԻՎՆՆԵՐԸ ԵՒ ՊԱԼԱՏԱԿԱՆ ՕԹԵԻՎՆԻԿՆԵՐԸ

Posted on January 14, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



Պարոյր Աղպաշեան, Պէյրուզ, 13 Յունուար 2011



Հայաստանի հիւսիսային եւ հիւսիսարեւելեան շրջաններու (Կիւմրիի, Վանաձորի, Ստեփանաւանի, Սպիտակի, Նալբանդի եւ անլի քան հարիւր այլ գիւղերու) տարերային երկրաշարժէն քսաներկու տարի ետք, ի՞նչ է կացութիւնը «աղետի գօտի»ին:

Պարոյր Աղպաշեան, Պէյրուզ, 13 Յունուար 2011



Հայաստանի հիւսիսային եւ հիւսիսարեւելեան շրջաններու (Կիւմրիի, Վանաձորի, Ստեփանաւանի, Սպիտակի, Նալբանդի եւ անլի քան հարիւր այլ գիւղերու) տարերային երկրաշարժէն քսաներկու տարի ետք, ի՞նչ է կացութիւնը «աղետի գօտի»ին:

Աւելի ճիշդ պիտի չըլլա՞ր հարցադրել, թէ ինչո՞ւ մինչեւ հիմա կայ «աղետի գօտի» հասկացողութիւնը, ինչո՞ւ շուրջ ԻՆՇ հազար ընտանիք տակաւին կը մնայ անօթեւան, անպատսպար եւ անտուն, մանաւանդ սաստիկ ծմեռնաշունչ եղանակին:

Արդեօք բաւարա՞ր են մասնակի ու կարկտան կարգադրութիւնները տնային շինարարութիւններուն կամ բնակարային կառուցումներուն, որոնք նոյնիկ «կրիայ»ի տրամաբանութեամբ, այսօր կրնային աղիտեալ շրջանները վերականգնել եւ աղիտահար բնակիչները ապահովել սեփական օճախներով:

Տակաւին Խորհրդային իշխանութիւններու շրջանին, բացառիկ որոշումով մը, խոստացուած էր վերականգնել աներեալ ամբողջ գօտիները, սակայն, ըստ պաշտօնական տուեալներու, մինչեւ օրս շինարարական ծրագիրները չեն հասած իրենց լրիւ լուծումներուն, ողբերգութեան նոր պայմաններ ստեղծելով, շարունակելի ըլլալու ամենայն հաւանականութեամբ:

Ո՞վ է յանցաւորը այս պարտագանցութեան:

Ո՞վ է պատասխանատուն այս անփութութեան:

Անտարակոյս, կեդրոնական իշխանութիւնները, իրերայաջորդ կառավարութիւնները, որոնք քսաներկու տարուան ընթացքին, ի վիճակի չեղան «աղիտաթափ» ընել տուեալ շրջանները ու բարօրելի կեանք մը պարգեւել տեղւոյն բնակչութեան:

Որեւէ կասկած չկայ, որ կառուցողական աշխատանքներ կատարուած են հոն կամ բնակարաններու համալիրներ բարձրացած, բայց անլի քան երկտասնամեակ հեռաւորութենէ ետք, երբ կը խորաչափենք արձանագրուած նուաճումները ու շուրջ ինը հազար ընտանիքներու անտերտիրականութիւնը (այսինքն՝ մօտաւոր հաշիւով քառասուն հազար հոգի), կը նշանակէ թէ կայ *աններելի* պատասխանատուութեան *անընդունելի* անպատասխանատուութիւն մը:

Ուրիշ բնորոշում կամ բացատրութիւն չկայ (ու չի կրնար ըլլալ), այնքան ատեն որ 2008-էն ի վեր, անօթեւաններու թղթածրարով զբաղող պետական հետաքրքրութիւն գրեթէ չկայ, այս հիմնահարցը ձգելով պատահականութիւններու կամ անհատական նախաձեռնութիւններու տնօրինումներուն:

Մեր կարծիքով, գէթ 2011 տարեշրջանին, անօթեւաններու պարագան, նաեւ աղիտեալ գօտիի հետքերը վերացնելու հրամայականութիւնը, պետք է դառնան ՄԱԿՅՈՒՆ օրակարգ, յստակ ու նախագծուած ժամանակաշրջանի մը մէջ, զանոնք հերթաբար եւ յաջորդաբար լուծելով:

Ինչպէս Արցախի վերականգնումը, վերաբնակեցումն ու վերաբարեկարգումը, հայ ժողովուրդի ուշադրութեան կիզակետին վրայ կը մնան, արդարօրէ՛ն, «աղետի գօտի»ն եւս նոյն հոգատարութեան տակ պետք է գտնուի, իրաւացիօրէ՛ն:

Հայրենի իշխանութիւններու սեպուհ պատրականութիւններէն պետք է ըլլայ այս *ազգային առաջադրանքը*, ինչո՛ւ ոչ, կազմակերպելով ու մշակելով յատուկ ծրագիրներ, վերանորոգութիւն ու վերաթափութիւն տալով շինարարական աշխատանքներուն ու բնակարանակերտութեան քաղաքականութեան:

Բառերը պետք չէ ծամծմել, ոչ ալ մատներու ետին պահուելու. անկախաբար անտարբերութեան վարքագիծէն, կայ նաեւ շահագործութեան միտում, յատկապէս այնպիսիներէ, որոնք իրենց անհատական ընչաքաղցութեան գերին դառնալով, «զոհ» կը դարձնեն հասարակութեան իրաւունքները:

Հոս կարելի է, կրկնելու գնով կրկնել հետեւեալ «պերճախօս» պատումը, որ դառն իրականութեան մը տխուր մէկ պատկերն է.

Աղիտահարներուն օգնելու հայրենասիրական-մարդասիրական նախանձախնդրութեամբ, օրի՛ն, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, սննդեղէնի հսկայական սառնարան մը կառուցեց-նուիրեց Կիւմրիին, որ արժեց շուրջ 6-7 միլիոն տուլար:

Քանի մը տարիներ ետք, պետական աւագանիին սառնասիրտ հայեացքներուն տակ, այդ սառնարանը «իւրացուեցաւ» վաշխառուի մը կողմէ, փոխան...հարիւր յիսուն հազար տուլարի:

Այս դատապարտելի արարքին դէմ ի՞նչ ըրին իշխանութիւնները, երբ այդ սառնարանը աղիտեալներուն սնունդ մատակարարելու կը ծառայէր: Հակառակ Սփիւռքէն ինչո՞ղ բողոքներուն ու աղաղակներուն, ամէն ինչ մնաց անարձագանգ եւ անհետեւանք:

Ինչպէ՞ս կարելի է պատկերացնել (կամ հաւատալ), որ այդօրինակ զաւթումները վերջ գտած են, երբ անպատժելիութիւնը կը մնայ տիրապետող գործօն, գէթ կարգ մը մակարդակներու վրայ:

Անապաստաններու թողլքուածութիւնը միթէ՞ այս շրջագիծին մէջ չիյնար, երբ հայրենակիցներու մեծ թիւ մը, տարուան չորս եղանակներուն, կը դեգերի բաց երկնքի տակ, կը գիշերէ հիւղակներու ու տնակներու մէջ:

Հանրապետութեան նախագահը, որ գովելի աշխուժութիւն ցոյց կու տայ, ամէն տեղ գտնուելու եւ այցելելու (նոյնիսկ փոքրիկ եւ աննշան վայրեր), աւելի լաւ չըլլա՞ր իր շրջապտոյտի ծիրը հասցնէր նաեւ «աղէտի գօտի»ները, *ապրէր* կարօտեալներուն մղձաւանջներն ու տագնապները, հոսսկ՝ գործի լծեր պատկան կողմերը, որպէսզի անոնք յաւելեալ տասնամեակներ չմնան այդ անմխիթար վիճակին մէջ:

Եթէ այս անյետաձգելիութիւնը եւս պիտի ձգուի հովին, ինչպէ՞ս պիտի զսպուի առանց այդ ալ գլուխը առած-գացած արտահոսքը, մանաւանդ երիտասարդութեան, որ դարձած է *ազգային աղէտ*:

Այլ ընտրանք չունին հայրենի իշխանութիւնները (իմա՝ պալատական օրենսդիրները), բացի՝ «աղէտի գօտի»ն վնասագեղծելէ, որքան շուտ՝ այնքան լաւ, «որեւէ ընտանիք անօրենան չծագելու» կարգախօսով, սկսելով *հե՛նց* այս ըրպէս:

